ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

N o1512 – Ա/2 «24» օգոստոսի 2022 թ.

«ԱԴՐԲԵՋԱՆԵՐԵՆ» ԱՌԱՐԿԱՅԻ 10-12-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԵՐԸ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հանրակրթության մասին» օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ պարբերությամբ, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2012 թվականի դեկտեմբերի 14-ի N 1144-Ն հրամանով հաստատված կարգի 11-րդ կետի պահանջներով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 661-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 19-րդ կետի 20-րդ ենթակետով՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ ԵՄ

1. Հանրակրթական դպրոցների 10-12-րդ դասարաններում որպես երրորդ օտար լեզու երաշխավորել գործածության «Ադրբեջաներեն» առարկայի ծրագրերը՝ համաձայն հավելվածի:

ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄԱՆՅԱՆ

X

Հավելված
ՀՀ կրթության, գիտության,
մշակույթի և սպորտի նախարարի
2022 թվականի օգոստոսի 24-ի
N 1512 – Ա/2 հրամանի

ԱԴՐԲԵՋԱՆԵՐԵՆԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

10-12-ՐԴ (ՆԱԵՎ՝ 7-9-ՐԴ) ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Հեղինակ՝ բ. գ. թ. Լիլիթ Մովսիսյան

Տասներորդ դասարան

/68 ժամ/

Դասընթացի նպատակն է աշակերտներին ներկայացնել ադրբեջաներենը որպես թյուրքական լեզուների խմբին պատկանող ինքնուրույն լեզու, ծանոթացնել ադրբեջաներենի ընդհանուր լեզվական առանձնահատկություններին, ներկայացնել դրա անցած ուղին և զարգացման ներկայիս միտումները, սովորեցնել ադրբեջաներենի այբուբենն ու հնչյունների արտաբերման առանձահատկությունները, ինչպես նաև հաղորդել ընդհանուր գիտելիքներ լեզվի քերականության հիմնական բաժինների վերաբերյալ, աշակերտների բառապաշարի մեջ ներմուծել առօրյա շփման և գործունեության համար անհրաժեշտ բառեր և արտահայտություններ, սովորեցնել կազմել համառոտ նախադասություններ, կատարել ադրբեջաներենից հայերեն և հայերենից ադրբեջաներեն պարզ թարգմանություններ, զարգացնել ընթերցելու, գրելու, խոսելու և լսելու հմտությունները:

Թեմա 1 (4 ժամ)

Ադրբեջաներենը որպես թյուրքական լեզու

Նպատակ

1) ձևավորել նախնական պատկերացում ադրբեջաներենի մասին՝ որպես ինքնուրույն լեզու թյուրքական լեզուների շարքում
2) ցույց տալ ադրբեջաներենի ընդհանուր լեզվական առանձնահատկությունները
3) համառոտ կերպով ծանոթացնել ադրբեջաներենի պատմությանը՝ ծագմանն ու զարգացման ներկայիս միտումներին

Վերջնարդյունքներ

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողը պետք է իմանա՝

1) որ լեզվաընտանիքին է պատկանում ադրբեջաներենը, ինչ բնորոշ ընդհանուր գծեր ունեն թյուրքական լեզուները
2) ադրբեջաներենի ծագումն ու զարգացման փուլերը ընդհանուր գծերով
3) ադրբեջաներենին բնորոշ լեզվական առանձնահատկությունները

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողը պետք է կարողանա՝

1) տարբերել ադրբեջաներենն իր ցեղակից լեզուներից (մասնավորապես՝ թուրքերեն, թուրքմեներեն)
2) ներկայացնել ընդհանուր տեղեկություններ ադրբեջաներենի պատմության մասին՝ շեշտը դնելով զարգացման ներկայիս միտումների ու ուղղությունների վրա

Բովանդակություն

1) ադրբեջաներենի տեղն ու դերը մյուս ժամանակակից թյուրքական լեզուների շարքում
2) ադրբեջաներենի համառոտ պատմությունը
3) ադրբեջաներենի հիմնական առանձնահատկություններն ու բնորոշ գծերը

Ուսումնական նյութեր

1) ադրբեջաներենի մասին որոշակի տեղեկություններ պարունակող ոչ ծավալուն հոդվածներ
2) ադրբեջաներենի պատմության և զարգացման մասին պատմող համառոտ տեսանյութեր

Ուսումնական գործունեության տեսակներ

1) համառոտ դասախոսություն
2) ինքնուրույն աշխատանք (փորձել գտնել և ներկայացնել որոշակի տեղեկություն ադրբեջաներենի մասին)

3) հարց ու պատասխան

Թեմա 2 (5 ժամ)

Հնչյունաբանություն

Նպատակ

1) սովորեցնել ադրբեջաներենի հնչյունական համակարգի հիմնական առանձնահատկությունները
2) սովորողի մոտ ձևավորել պատկերացում ադրբեջաներենի տառերի և հնչյունների վերաբերյալ
3) սովորեցնել հստակ և ճիշտ արտաբերել ադրբեջաներեն բառերը, ինչպես նաև արտասանության կանոններն ու օրինաչափությունները՝ փորձելով զուգահեռներ անցկացնել հայոց լեզվի հնչյունների և դրանց արտաբերման եղանակների հետ

Վերջնարդյունքներ

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողը պետք է իմանա՝

1) ադրբեջաներենի այբուբենը
2) ուսուցանված տառերի գրությունը, հիմնական ուղղագրական կանոնները
3) ադրբեջաներեն տառերի հնչյունային արտաբերման օրինաչափությունները

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողը պետք է կարողանա՝

1) ճանաչել ադրբեջաներեն տառերը, հստակ տարբերել ադրբեջաներենի բաղաձայն և ձայնավոր հնչյունները և դրանք խմբավորել ըստ իրենց բնորոշ առանձնահատկությունների
2) գրել ադրբեջաներեն տառերը և ճիշտ արտաբերել հնչյունները՝ ըստ հնչյունական կանոնների և օրինաչափությունների
3) հնչյունների հստակ դասավորության պարագայում գրագետ կերպով արտասանել ադրբեջաներեն բառը՝ պահպանելով բառային շեշտի կանոնը

Բովանդակություն

1) ադրբեջաներենի այբուբենը, զուգահեռների անցկացում հայերենի տառերի և հնչյունների հետ
2) ադրբեջաներենի այբուբենը, ձայնավորների (առաջնային և հետնային շարքի, շրթնային և ոչ շրթնային, լայն և նեղ) և բաղաձայնների (ձայնեղ, խուլ, ձայնորդ) դասակարգումը ըստ հիմնական խմբերի
3) ձայնավորների ներդաշնակությունը, դրա էությունն ու օրինաչափությունները
4) բառային շեշտն ադրբեջաներենում

Ուսումնական նյութեր

1) այբուբենի և ադրբեջաներենի հնչյունների վերաբերյալ ուսուցողական պաստառներ, նկարներ
2) կարճ բանաստեղծություններ
3) տեսանյութեր, աուդիո ձայնագրություններ

Ուսումնական գործունեության տեսակներ

1) տառերի ուսուցում ինտերակտիվ և զուգադրական մեթոդներով
2) ակտիվ խաղերի, բառախաղերի միջոցով սովորողները կարդում են տառերը և արտաբերում հնչյունները
3) շուտասելուկներ

Թեմա 3 (9 ժամ)

Շփման համար անհրաժեշտ նվազագույն բառապաշար

Նպատակ

1) ծանոթացնել այն բառերին և արտահայտություններին, որոնց միջոցով սովորողը կկարողանա ողջունել, ծանոթանալ և հրաժեշտ տալ զրուցակցին
2) սովորեցնել ներկայանալ ադրբեջաներենով, հակիրճ խոսել սեփական առօրյայի մասին
3) տիրապետելով դպրոցական առօրյայում հաճախ կիրառվող բառերին՝ օգնել կազմել համառոտ նախադասություններ՝ կիրառելով ուսման ընթացքում հանդիպող բառեր, տերմիններ և արտահայտություններ

4) աշակերտների բառապաշարի մեջ ներմուծել այնպիսի բառեր, որոնց օգնությամբ կազմելով ինքնուրույն խոսք՝ նրանք կկարողանան պատմել իրենց ընտանիքի, ընկերների, բնակավայրի մասին
5) ցույց տալ այն բառերն ու արտահայտությունները, որոնց միջոցով սովորողը կկարողանա խոսել գույների, մարմնի մասերի անվանումների, ինչպես նաև տարվա եղանակների ու օրվա ժամերի հետ առնչություն ունեցող զանազան թեմաների մասին

Վերջնարդյունքներ

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողը պետք է իմանա՝

1) այն բառերն ու արտահայտությունները, որոնք անհրաժեշտ են վերոնշյալ թեմաների շուրջ խոսելու, լսելու և ընթերցելու համար
2) խոսակցական լեզվում հաճախ կիրառվող գոյականներ, ածականներ, բայեր, մակբայներ, թվականներ
3) գործածական կայուն արտահայտություններ, քաղաքավարի շփման մեջ կիրառվող բառեր և բառակապակցություններ

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողը պետք է կարողանա՝

1) հասկանալ ուսուցչի կամ դասընկերոջ կողմից արտաբերված ողջույնի, ծանոթության կամ հրաժեշտի արտահայտությունները
2) ծանոթանալ և ներկայացնել իրեն ադրբեջաներենով՝ գործածելով թեմայի շրջանակներում սովորած բառերը
3) պատասխանել ուսուցչի պարզ հարցերին, կատարել հրահանգները, որոնք առնչվում են վերոնշյալ թեմաներին, այդ թվում՝ ընտանիքին, ընկերներին, իր բնակավայրին, դպրոցին, դպրոցական առօրյային, նախասիրություններին և այլն
4) զրուցել այնպիսի թեմաների շուրջ, որտեղ խոսվում է գույների, մարմնի անդամների, եղանակի, օրվա ժամերի և այլնի մասին
5) կազմել հակիրճ ինքնուրույն խոսք՝ համառոտ նախադասություններ, երկխոսություններ և տեքստեր

Բովանդակություն

1) ողջույնի և ծանոթության, հրաժեշտի ժամանակ գործածվող արտահայտություններ
2) առօրյա շփման մեջ հաճախակի կիրառվող բառեր և արտահայտություններ, որոնք կապված են աշակերտի կրթության, դպրոցի, ընտանիքի, ընկերների, նախասիրությունների և այլ թեմաների հետ
3) գույների անվանումներ
4) տարվա եղանակներ և ամիսներ, բնության երևույթներ
5) օրվա ժամեր և դրանց առնչվող բառապաշար

Ուսումնական նյութեր

1) նկարներ, պաստառներ, բացիկներ
2) կարճ բանաստեղծություններ, երգեր
3) շատ պարզ ու հասկանալի լեզվով հնչող ուսուցողական տեսանյութեր, այդ թվում՝ մուլտֆիլմեր, որտեղ սովորեցնում են թեմային առնչվող բառեր և արտահայտություններ
4) հանելուկներ
5) համառոտ թեմատիկ զրուցարաններ
6) տեքստեր

Ուսումնական գործունեության տեսակներ՝

1) դերախաղեր, պարզունակ վիկտորինաներ
2) խմբային աշխատանք
3) երկխոսություն, հարց ու պատասխան
4) թարգմանություններ

Թեմա 4 (7 ժամ)

Հաղորդակցման հմտություններ

Նպատակ

1) այլ օտար լեզուների օրինակով սովորողի մոտ ձևավորել այնպիսի կարողություններ, որոնք անհրաժեշտ են շփման և հաղորդակցման համար
2) սովորեցնել հաղորդակցման համար անհրաժեշտ մի շարք հմտություններ
3) ցույց տալ այն մեթոդները, որոնց շնորհիվ օտար լեզվով շփումը դառնում է հնարավորինս հեշտ և անխոչընդոտ
4) զարգացնել լսելու, հասկանալու և խոսելու հմտությունները
5) խաղերի, դերախաղերի, մրցույթների միջոցով օգնել աշակերտներին հաղթահարել օտար լեզվով ազատ հաղորդակցվելու հետ կապված դժվարությունները

Վերջնարդյունքներ

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողը պետք է իմանա՝

1) ինչ գիտելիքներ, հմտություններ, նախադրյալներ են անհրաժեշտ օտար լեզվով, մասնավորապես ադրբեջաներենով հաղորդկացվելու համար
2) գրավոր խոսքի միջոցով արտահայտվելու և շփվելու նրբություններն ու կարևորությունը
3) բանավոր հաղորդակցման առավելությունները և դժվարությունները

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողը պետք է կարողանա՝

1) լսել և հասկանալ դասավանդողի պարզ խոսքը ու կատարել հրահանգները
2) լսել և հասկանալ պարզ մանկական երգեր, մուլտֆիլմեր, առօրյա թեմաների շուրջ երկխոսություններ, հակիրճ տեքստեր
3) լսել և ճիշտ պատասխանել ոչ բարդ հարցերին
4) վարել պարզ լեզվով արտահայտված համառոտ երկխոսություններ
5) կարդալ, հասկանալ և պատասխանել պարզ լեզվով գրված հարցերի և նամակների

Բովանդակություն

1) խոսելու հմտություններ՝ փոքր երկխոսություններ ծանոթ թեմաների շուրջ, համառոտ նախադասություններ, խնդրանք, հարց ու պատասխան

2) բանավոր պարզ ու մշակված խոսքը լսելու և ընկալելու հմտություններ
3) գրելու կարողություն՝ բառակապակցություններ և նախադասություններ ծանոթ խոսքային կաղապարների և յուրացրած բառապաշարի շրջանակներում
4) արագ ընթերցանության հմտության ձևավորում և զարգացում, կարդացած նյութը վերաշարադրելու, վերարտադրելու կարողություն

Ուսումնական նյութեր

1) մանկական բանաստեղծություններ, երգեր
2) ուսուցողական ձայնային և տեսանյութեր
3) մուլտֆիլմեր
4) վարժություններ, թեստեր
5) նամակներ, բացիկներ

Ուսումնական գործունեության տեսակներ

1) դերախաղեր, վիկտորինաներ
2) խմբային աշխատանքներ
3) երկխոսություններ, քննարկումներ
4) լրացուցիչ ընթերցանություն
5) շարադրություններ
6) փոխադրություններ ????

Թեմա 5 (6 ժամ)

Դերանուններ

Նպատակ

1) ներկայացնել դերանունների բնութագիրն ադրբեջաներենում որպես ինքնուրույն խոսքի մաս
2) աշակերտներին ծանոթացնել ադրբեջաներենի դերանունների տեսակներին և ամենագործածական դերանուններին

3) ցույց տալ դերանունների կիրառության առանձնահատկությունները և քերականական հատկանիշները

Վերջնարդյունքներ

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողը պետք է իմանա՝

1) ինչ են ցույց տալիս դերանունները և որոնք են դրանց գործառույթները
2) ադրբեջաներենի դերանունների տեսակները
3) դերանունների գործածության կարևորությունը գրավոր ու բանավոր խոսքում

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողը պետք է կարողանա՝

1) տարբերել դերանունն ադրբեջաներենի մյուս խոսքի մասերից
2) ցույց դալ դերանուններին բնորոշ հիմնական հատկությունները
3) տարբերել դերանուններն ըստ տեսակի և կազմության
4) հստակ գործածել դերանունները բանավոր և գրավոր խոսքում

Բովանդակություն

1) ինչ է դերանունը, դերանվան քերականական կարգերը
2) դերանունների տեսակները և դրանց իմաստային, գործառնական տարբերությունները
3) ադրբեջաներենի անձնական և ստացական դերանունները
4) ադրբեջաներենի ցուցական դերանունները
5) ադրբեջաներենի առավել գործածական հարցական դերանունները (kim? nə? hansi? harada? necə? neçə? nəçi?)
6) ադրբեջաներենի ժխտական դերանունները
7) բառեր և մասնիկներ,որոնց օգնությամբ կազմվում են նոր դերանուններ (անորոշ փոխադարձ և այլն)

Ուսումնական նյութեր

1) նկարներ, պաստառներ

2) ուսուցողական հոլովակներ

3) վարժություններ

4) թեստեր

5) տեսական նյութ

Ուսումնական գործունեության տեսակներ

1) բառախաղեր
2) անհատական հանձնարարություններ
3) երկխոսություններ
4) գործնական աշխատանք
5) տնային հանձնարարություն

Թեմա 6 (7 ժամ)

Հոլովներն ու գոյականի կապակցության ձևերն ադրբեջաներենում

Նպատակ

1) ներկայացնել ադրբեջաներենի հոլովման համակարգի առանձնահատկությունները
2) սովորեցնել հոլովման կանոններն ու օրինաչափությունները
3) ծանոթացնել յուրաքանչյուր հոլովի համար գործածվող հոլովական վերջածանցներին
4) բացատրել գոյականների կապակցության էությունն ու նշանակությունը
5) ցույց տալ, թե ինչպես է կազմվում կապակցության յուրաքանչյուր տեսակ

Վերջնարդյունքներ

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողը պետք է իմանա՝

1) ադրբեջաներենի հոլովական համակարգի բնորոշ առանձնահատկությունները
2) ադրբեջաներենի հոլովների կազմության ժամանակ կիրառվող հոլովական վերջածանցներն ու դրանց գործածության շրջանակները

3) ընդհանուր գիտելիքներ գոյականների կապակցության ձևերի վերաբերյալ
4) ինչպես են արտահայտվում գոյականների կապակցության ձևերը հայերենի համապատասխան քերականական կառույցներում

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողը պետք է կարողանա՝

1) ընկալել հոլովների դերն ու նշանակությունը կապակցված խոսք կազմելու մեջ
2) ճանաչել ու տարբերել բոլոր հոլովներն ըստ իրենց տեսակների և նշանակության
3) խմբավորել ադրբեջաներենի հոլովակերտ վերջածանցներն ըստ իրենց տեսակների
4) հոլովել բառերն ըստ անհրաժեշտության
5) խոսքի մեջ ճշգրիտ գործածել հոլովները՝ պահպանելով հոլովման աղյուսակի կանոնները
6) հասկանալ գոյականների կապակցության ձևերի էությունը և դրանց գործառնական առանձնահատկությունները
7) կարդալ և հասկանալ նախադասությունները, որտեղ առկա են գոյականների կապակցության ձևեր
8) գրագետ կերպով կիրառել գոյականների կապակցության ձևերը՝ հետևելով քերականական կանոններին

Բովանդակություն

1) հոլովը որպես գոյականի քերականական կարգ
2) հոլովների տեսակներն ադրբեջաներենում
3) ուղղական հոլով, դրանով արտահայտված բառերի շարահյուսական գործածությունը
4) սեռական հոլով (կազմվում է –in, -in, -un, -ün, -nin, -nin, -nun, -nün վերջածանցների օգնությամբ)
5) ներգոյական հոլով (կազմվում է -da, -də վերջածանցների օգնությամբ)
6) տրական հոլով (կազմվում է -a, -ə, -ya, -yə վերջածանցների օգնությամբ)
7) բացառական հոլով (կազմվում է -dan, -dən վերջածանցների օգնությամբ)
8) հայցական հոլով (կազմվում է -i, i, -u, -ü, -ni, -ni, -nu, -nü վերջածանցների օգնությամբ)

9) գոյականաբար գործածվող բառերի հոլովում (անորոշ դերբայ, անձնական և ցուցական դերանուններ և այլն)
10) գոյականների կապակցության ձևերն ու վերջիններիս հիմնական գործառույթները
11) գոյականների կապակցության առաջին ձև (բառակապակցության մեջ առաջին բաղադրիչը դրվում է ուղղական հոլովով, իսկ երկրորդ բաղադրիչը ստանում է երրորդ դեմքի պատկանելության վերջածանց)
12) գոյականների կապակցության երկրորդ՝ անվերջածանց ձև (բառակապակցության մեջ երկու բաղադրիչներից ոչ մեկը չի ստանում որևէ վերջածանց)

Ուսումնական նյութեր

1) տեսական նյութ
2) պաստառներ, նկարներ
3) վարժություններ
4) թեստեր
5) ուսուցողական հոլովակներ
6) հոլովման աղյուսակներ

Ուսումնական գործունեության տեսակներ

1) բառախաղեր
2) երկխոսություններ
3) թարգմանություններ
4) խմբային աշխատանք
5) տնային հանձնարարություն

Թեմա 7 (5 ժամ)

Ածական անուն

Նպատակ

1) աշակերտներին ներկայացնել ածական անունը որպես ինքնուրույն խոսքի մաս ադրբեջաներենում
2) ցույց տալ ածականների ձևաբանական հատկությունները և տեսակները
3) ծանոթացնել ածականների շարահյուսական գործածության առանձնահատկություններին

Վերջնարդյունքներ

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողը պետք է իմանա՝

1) ադրբեջաներենի ածականների ձևաբանական առանձնահատկությունները
2) ածականների տեսակներն ըստ կազմության և ըստ իմաստի
3) ածականների գործածության ձևերը նախադասության մեջ

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողը պետք է կարողանա՝

1) հստակ տարբերել ածականն ադրբեջաներենի մյուս խոսքի մասերից
2) ներկայացնել ածականի ձևաբանական առանձնահատկությունները
3) գործածել ածականները գրավոր և բանավոր խոսքում՝ հետևելով քերականական կանոններին ու կիրառության առանձնահատկություններին
4) խմբավորել ադրբեջաներենի ածականներն ըստ տեսակի և կազմության

Բովանդակություն

1) ածականների ընդհանուր բնութագիրն ադրբեջաներենում, ինչ է այն ցույց տալիս (հատկանիշ, վերաբերություն)
2) ածականների ձևաբանական առանձնահատկությունները
3) ածականների տեսակները՝ որակական և հարաբերական
4) ածականների կազմությունը՝ պարզ, ածանցավոր, բարդ
5) ածականների համեմատության աստիճանները
6) ածականների շարահյուսական կիրառությունը

Ուսումնական նյութեր

1) տեսական նյութ

2) վարժություններ

3) թեստեր

4) ուսուցողական հոլովակներ

Ուսումնական գործունեության տեսակներ

1) գործնական աշխատանք (բանավոր և գրավոր աշխատանքներ)
2) անհատական և խմբային աշխատանք
3) բառախաղեր
4) երկխոսություններ
5) բանավոր և գրավոր թարգմանություն

Թեմա 8 (4 ժամ)

Անվանական սփորոգյալ

Նպատակ

1) աշակերտներին բացատրել, թե որն է բայական և անվանական ստորոգյալների տարբերությունը
2) ցույց տալ անվանական ստորոգյալի գործածության ձևերն ու հնարավորությունները
3) սովորեցնել անվանական ստորոգյալի ներկա և անցյալ ժամանակաձևերի կազմությունը և կիրառման առանձնահատկությունները

Վերջնարդյուքներ

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողը պետք է իմանա՝

1) հստակ պատկերացում ունենա ադրբեջաներենում ստորոգյալի շարահյուսական գործառույթների մասին
2) անվանական ստորոգյալի բնութագիրը, գործածության ձևերը
3) անվանական ստորոգյալի և բայական ստորոգյալի միջև առկա տարբերությունները

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողը պետք է կարողանա՝

1) տարբերել անվանական և բայական ստորոգյալները, հստակ ցույց տալ վերջիններիս գործածության առանձնահատկությունները
2) ներկայացնել անվանական ստորոգյալի գործածության ձևերն ու հնարավորությունները
3) կազմել պարզ նախադասություններ՝ ստորոգյալի պաշտոնում կիրառելով անվանական ստորոգյալն անցյալ կամ ներկա ժամանակում
4) լսել և հասկանալ կարճ նախադասություններ, որտեղ ստորոգյալն արտահայտված է անուն խոսքի մասով
5) ճշգրիտ կիրառել անվանական ստորոգյալի ներկա և անցյալ ժամանակաձևերի կազմության համար անհրաժեշտ վերջածանցները՝ ցույց տալով դրանց իմաստատարբերակիչ նշանակությունը

Բովանդակություն

1) ստորոգյալն ադրբեջաներենում
2) ինչ է անվանական ստորոգյալը
3) անվանական ստորոգյալի և բայական ստորոգյալի տարբերությունները
4) անվանական ստորոգյալի ներկա ժամանակաձևը, ստորոգման վերջածանցներ, հաստատական, հարցական, ժխտական ձևերը
5) անվանական ստորոգյալի անցյալ ժամանակաձևը, կազմությունը, կիրառությունը՝ հաստատական, հարցական, ժխտական ձևերով

Ուսումնական նյութեր

1) տեսական նյութ
2) վարժություններ
3) թեստեր
4) ուսուցողական հոլովակներ
5) տեսական նյութի ամրապնդման նպատակով գործածվող աղյուսակներ

Ուսումնական գործունեության տեսակներ

1) համառոտ թարգմանություններ

2) հարց ու պատասխան, հրահանգների կատարում

3) երկխոսություններ

4) խմբային աշխատանք

5) տնային հանձնարարություն

Թեմա 9 (5 ժամ)

Պատկանելություն ու հոգնակի թիվ

Նպատակ

1) ներկայացնել պատկանելության գաղափարն ադրբեջաներենում
2) ծանոթացնել այն վերջածանցներին, որոնց միջոցով արտահայտվում է պատկանելությունը, ինչպես նաև öz բառի գործածությանը որպես պատկանելություն արտահայտող բառ
3) բացատրել, թե ինչպես է արտահայտվում հոգնակիությունն ադրբեջաներենում
4) ցույց տալ հոգնակի թվի կազմության ժամանակ կցվող վերջածանցներն ու դրանց գործածման կանոնները

Վերջնարդյունքներ

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողը պետք է իմանա՝

1) պատկանելության էությունը, ինչպես է այն արտահայտվում ադրբեջաներենում
2) հոգնակի թվի կազմության ձևերը և հիմնական օրինաչափությունները

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողը պետք է կարողանա՝

1) ընկալել և ներկայացնել պատկանելության արտահայտման ձևերն ադրբեջաներենում
2) գրագետ կիրառել պատկանելության վերջածանցները՝ հստակ տարբերակելով դրանք ըստ դեմքի և թվի
3) պատկանելության վերջածանցների միջոցով արտահայտել ադրբեջաներենի <<ունենալ>> պակասավոր բայը
4) ճշգրիտ գործածել öz բառը պատկանելության իմաստ արտահայտելու համար

5) կազմել բառերի հոգնակի ձևերը՝ ճշգրիտ կիրառելով հոգնակիակերտ վերջածանցները
6) գրավոր խոսքում նախադասությունների մեջ, ինչպես նաև բանավոր խոսքում ճշգրիտ և գրագետ կիրառել պատկանելության և հոգնակիակերտ վերջածանցներ ստացած բառերը
7) ադրբեջաներենից հայերեն և հակառակ թարգմանություններ կատարելիս ճշգրիտ կերպով հետևել պատկանելության և հոգնակիակերտ վերջածանցների գրագետ գործածմանը

Բովանդակություն

1) ինչ է պատկանելությունը
2) պատկանելության արտահայտման ձևերը
3) պատկանելության վերջածանցներն ըստ դեմքի և թվի
4) ինչպես է արտահայտվում հայերենի <<ունենալ>> բայն ադրբեջաներենում
5) <<var, yox >> անունների կազմությունն ադրբեջաներենում
6) öz բառի կիրառությունը
7) հոգնակի թվի կազմությունը lar-lər վերջածանցների միջոցով
8) հոգնակիության արտահայտման այլ ձևեր
9) հոգնակի թվի վերջածանց ստացած բառերի գործածումը նախադասությունների մեջ

Ուսումնական նյութեր

1) տեսական նյութ
2) պատկանելության վերջածանցների աղյուսակներ
3) վարժություններ
4) թեստեր
5) ուսուցողական հոլովակներ

Ուսումնական գործունեության տեսակներ

1) գործնական աշխատանք դասարանում

2) տնային հանձնարարություն

3) համառոտ թարգմանություններ

4) երկխոսություններ

5) թարգմանություններ

Թեմա 10 (7 ժամ)

Թվական անուն

Նպատակ

1) ներկայացնել թվական անունն ադրբեջաներենում որպես ինքնուրույն խոսքի մաս
2) ցույց տալ թվականների ձևաբանական առանձնահատկությունները
3) ծանոթացնել թվականների գործածության ձևերին և հնարավորություններին

Վերջնարդյունքներ

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողը պետք է իմանա՝

1) թվականի դերն ադրբեջաներենի խոսքի մասերի համակարգում
2) թվականների տեսակները և դրանց բնորոշ հատկությունները
3) թվականների կազմությունը
4) թվականների գործածությունը նախադասության մեջ

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողը պետք է կարողանա՝

1) տարբերել թվականն ադրբեջաներենի մյուս խոսքի մասերից
2) ցույց տալ այն գործառույթները, որ կատարում են թվականները խոսքի մեջ
3) խմբավորել թվականներն ըստ տեսակի
4) առանձնացնել թվականներն ըստ իրենց կազմության
5) կազմել նախադասություններ՝ գործածելով թվականներ

Բովանդակություն

1) ինչ է թվական անունը

2) թվականի տեսակները՝ քանակական և դասական
3) քանակական թվականների տեսակները՝ որոշյալ քանակական, անորոշ քանակական, կոտորակային և բաշխական թվականներ
4) դասական թվականներն ու դրանց կազմությունը
5) թվականներն ըստ կազմության՝ պարզ, ածանցավոր և բարդ
6) թվականների շարահյուսական գործածությունը

Ուսումնական նյութեր

1) տեսական նյութ
2) թվերի պատկերներով ուսուցողական պաստառներ
3) երգեր, ուսուցողական մուլտֆիլմեր
4) վարժություններ
5) թեստեր
6) ուսուցողական հոլովակներ

Ուսումնական գործունեության տեսակներ

1) գործնական աշխատանք դասարանում
2) տնային հանձնարարություն
3) բառախաղեր
4) երկխոսություններ

Թեմա 11 (3 ժամ)

Շաղկապներ

Նպատակ

1) ծանոթացնել ադրբեջաներենի շաղկապներին
2) ցույց տալ շաղկապների հիմնական գործառույթներն ըստ տեսակների

Վերջնարդյունքներ

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողը պետք է իմանա՝

1) շաղկապի ընդհանուր բնութագիրը
2) շաղկապների տեսակները
3) ադրբեջաներենի ամենագործածական շաղկապները և դրանց կիրառման օրինաչափությունները

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողը պետք է կարողանա՝

1) զանազանել շաղկապները որպես առանձին խոսքի մաս
2) խմբավորել շաղկապներն ըստ տեսակի
3) կազմել նախադասություններ՝ կիրառելով շաղկապներ
4) ցույց տալ շաղկապների շարահյուսորեն գործածության դերը նախադասության մեջ

Բովանդակություն

1) շաղկապը որպես ոչ ինքնուրույն խոսքի մաս
2) ադրբեջաներենի առավել գործածական համադասական շաղկապները (ya..ya, yoxsa, həm… həm, nə… nə)
3) ադրբեջաներենի առավել գործածական ստորադասական շաղկապները (ki, amma, lakin, halbuki, çünki և այլն)
4) շաղկապների շարահյուսական գործառույթները

Ուսումնական նյութեր՝

1) տեսական նյութ
2) ուսուցողական պաստառներ
3) վարժություններ
4) թեստային աշխատանքներ
5) ուսուցողական հոլովակներ

Ուսումնական գործունեության տեսակներ՝

1) գործնական աշխատանք դասարանում
2) տնային հանձնարարություն
3) զուգադրություններ հայերենի հետ
4) բառախաղեր
5) երկխոսություններ
6) խմբային աշխատանքներ

Թեմա 12 (6 ժամ)

Բայ

Նպատակ

1) ծանոթացնել ադրբեջաներենի բայական համակարգի հիմնական առանձնահատկություններին
2) բացատրել բայի անդեմ և դիմավոր ձևերի հիմնական գործառույթները
3) ընդհանուր գծերով ներկայացնել ադրբեջաներենում բայի եղանակները
4) ցույց տալ, թե ինչ սկզբունքով և օրինաչափությամբ են խոնարհվում բայերն ադրբեջաներենում

Վերջնարդյունքներ

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողը պետք է իմանա՝

1) ինչ է բայը, և ինչպես է այն արտահայտվում ադրբեջաներենում
2) բայերի խոնարհման սկզբունքներն ու օրինաչափությունները
3) բայի անդեմ և դիմավոր ձևերի հիմնական գործառույթները
4) ադրբեջաներենի առավել գործածական բայերը

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողը պետք է կարողանա՝

1) հստակ տարբերել բայն ադրբեջաներենի մյուս խոսքի մասերից

2) ներկայացնել բայի քերականական կարգերն ու առաձնահատկությունները
3) ցույց տալ բայի անդեմ ձևի՝ անորոշ դերբայի կազմությունը
4) կիրառել բայի՝ իրեն ծանոթ եղանակներն ու ժամանակաձևերը գրավոր և բանավոր խոսքում
5) տիրապետել անցած թեմաների շրջանակներում բայերի խոնարհման աղյուսակներին

Բովանդակություն

1) ինչ է բայը
2) բայի քերականական կարգերը
3) բայի խոնարհման ձևերն ադրբեջաներենում
4) հրամայական եղանակի երկրորդ դեմքի կազմությունը
5) սահմանական եղանակի ներկա ժամանակաձև
6) սահմանական եղանակի անցյալ կատարյալ ժամանակաձև

Ուսումնական նյութեր

1) տեսական նյութ
2) խոնարհման համար անհրաժեշտ վերջածանցների աղյուսակներ
3) վարժություններ
4) ուսուցողական հոլովակներ
5) տեքստեր

Ուսումնական գործունեության տեսակներ

1) գործնական աշխատանք դասարանում
2) տնային հանձնարարություն
3) բառախաղեր
4) երկխոսություններ
5) թարգմանություններ
6) անհատական և խմբային աշխատանքներ

Տասնմեկերորդ դասարան

/68 ժամ/

Դասընթացի նպատակն է ավելի հարստացնել սովորողների բառապաշարը՝ ներմուծելով նոր բառեր և արտահայտություններ, որոնք ընդգրկում են ավելի բազմազան ու լայն թեմաներ (նախասիրություններ, աշխատանքային գործունեություն, հայրենիք, կենդանական աշխարհ, սնունդ, ճանապարհորդություն, սպորտ, մշակույթ և այլ թեմաներ), ծանոթացնել ադրբեջաներենի քերականության համեմատաբար ավելի բարդ բաժիններին, ծանոթացնել ձևաբանական նոր կաղապարների, կառույցների նրբություններին, ցույց տալ բառակազմական վերջածանցների կարևությունը նոր բառեր կազմելու գործում, սովորեցնել բայերի խոնարհման կանոնները նոր ժամանակաձևերով ու եղանակաձևերով, ներկայացնել հետադրություններն ու կապական բառերը որպես ոչ ինքնուրույն խոսքի մասեր: Դասընթացի նպատակն է նաև սովորողների մոտ զարգացնել հաղորդակցման հմտությունները, մասնավորապես լսելու և խոսելու կարողությունները, ինչպես նաև կարդացած կամ լսած նյութը վերարտադրելու ունակությունները:

Թեմա 1 (14 ժամ)

Բառապաշար

Նպատակ

1) սովորողների բառապաշարի մեջ ներմուծել այնպիսի բառեր և արտահայտություններ, որոնց շնորհիվ նրանք կկարողանան զրուցել հետևյալ թեմաների շուրջ՝ կենդանական և բուսական աշխարհ, սնունդ, միրգ ու բանջարեղեն, սպասքի պարագաներ, նախասիրություններ, աշխատանքային և մասնագիտական գործունեություն, ճանապարհորդություն, էքսկուրսիաներ, սպորտ, մշակույթ

2) սովորողների մոտ հարստացնել Հայաստանին (պատմություն, աշխարհագրական դիրք, քաղաքներ, բնակչություն, խորհրդանիշներ, մշակութային ժառանգություն, ավանդույթներ, տոներ և այլն) և հայերին առնչվող թեմատիկ բառապաշարը
3) զարգացնել վերոնշյալ թեմաների շրջանակներում ոչ բարդ հարցերին պատասխանելու, երկխոսության մեջ մտնելու, ինչպես նաև սեփական, ինքնուրույն խոսքը կազմելու կարողությունը

Վերջնարդյունքներ

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողը պետք է իմանա՝

1) սեփական հայրենիքը՝ Հայաստանը ներկայացնելու համար անհրաժեշտ համապատասխան բառապաշար, որը կընդգրկի զանազան ոլորտներ
2) ընտանի և վայրի կենդանիների անվանումները, նրանց հատկանիշները բնորոշող բառապաշարը
3) սննդամթերքի տեսակները և նրանց հատկանիշները, սպասքի պարագաներն անվանող բառապաշարը
4) տարբեր ազգությունների, երկրների անվանումները, աշխարհագրական որոշ տեղանուններ
5) աշխատանքային առօրյային, նախասիրություններին, սովորություններին վերաբերող բառապաշար
6) մարզական և մշակութային ոլորտներին առնչվող բառեր և արտահայտություններ

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողը պետք է կարողանա՝

1) ադրբեջաներենով ներկայացնել սեփական երկիրն ու ազգությունը, պատասխանել իր ազգության, երկրի մասին հնչող պարզ հարցերի, ինչպես նաև ունենալ որոշակի տեղեկություններ այլ երկրների, ազգությունների, նրանց ծագման և լեզվի մասին
2) խոսել կենդանական աշխարհի մասին՝ ներկայացնելով նրանց ընդհանուր հատկանիշները

3) պատասխանել սնվելու ռեժիմի, աննդամթերքի տեսակների մասին պարզ հարցերի և փոխադարձ հարցեր ուղղել զրուցակցին՝ գործածելով պարզ բառեր ու նախադասություններ
4) կարդալ, լսել և հասկանալ նախասիրությունների և հետաքրքրությունների, աշխատանքային գործունեության մասին պարզ խոսքը (տեսանյութ, ձայնագրություն և այլն), ինչպես նաև պատմել սեփական նախասիրությունների, մասնագիտական գործունեության մասին, ինչպես նաև վարել ոչ բարդ նամակագրություն
5) ընթերցել և հասկանալ տեղեկատվական բնույթի պարզ տեքստեր (մարզական իրադարձություններ, կարճ հոդվածներ, գովազդներ), համառոտ պատմել մարզաձևերի, մարզիկների, մարզական իրադարձությունների մասին
6) լսել և հասկանալ, կարդալ և հասկանալ մշակույթի թեմայով հնչող կամ գրված պարզ խոսքը, խոսել, ներկայացնել ոչ ծավալուն նյութ մշակույթի որևէ գործչի կամ որևէ ճյուղի վերաբերյալ, սույն թեմաների շրջանակներում պատասխանել հարցերի և մտնել երկխոսության մեջ
7) լսել և հասկանալ, ընթերցել և հասկանալ Հայաստանի մասին որևէ տեքստի կամ տեսանյութի հիմնական բովանդակությունը, սահուն ներկայացնել նախօրոք պատրաստած խոսքը հայկական ազգային արժեքների, ավանդույթների, մշակութային իրադարձությունների մասին

Բովանդակություն

1) հայրենիքը բնութագրելու համար անհրաժեշտ բառեր և արտահայտություններ, որոնք ընդգրկում եմ հետևյալ ոլորտները՝ պատմություն, աշխարհագրություն, մշակույթ, ժողովրդական բանահյուսություն և այլն
2) ընտանի և վայրի կենդանիների անվանումներ, նրանց կենսագործունեությանը բնորոշ բառապաշար
3) սննդամթերքի անվանումներ, սպասքի պարագաներ, սնվելու ռեժիմին առնչվող բառեր և արտահայտություններ
4) երկրների, ազգությունների անվանումներ

5) նախասիրությունների, զանազան զբաղմունքերի, աշխատանքային առօրյայի վերաբերյալ բառապաշար
6) մարզաձևերի անվանումներ, սպորտային գործունեությանն առնչվող բառեր և արտահայտություններ
7) մշակութային գործունեության ձևերին, հոգևոր և նյութական մշակույթին, մշակութային գործիչների կենսագրությանը և ստեղծագործական կյանքին, մշակութային ժառանգության պահպանմանը, միջմշակութային շփումներին առնչվող բառապաշար

Ուսումնական նյութեր

1) պաստառներ (կենդանիների նկարներ, սննդի հետ կապված նկարներ, երկրների, ազգությունների անվանումներ, աշխարհագրական տեղանուններ մայրաքաղաքներ և այլն)
2) զրուցարան
3) թեմաներին համապատասխան աուդիո և տեսանյութեր
4) բանաստեղծություններ, հանելուկներ
5) մուլտֆիլմեր, կարճամետրաժ ֆիլմեր
6) տեքստեր

Ուսումնական գործունեության տեսակներ

1) պրեզենտացիա
2) դերախաղ
3) խաղ-վիկտորինա
4) խմբային աշխատանք
5) քննարկումներ
6) երկխոսություն
7) հարց ու պատասխան, բանավեճ
8) զեկույցների ներկայացում
9) թարգմանություն

Թեմա 2 (7 ժամ)

Բառակազմական վերջածանցներ

Նպատակը

1) ծանոթացնել ադրբեջաներենի ամենագործածական վերջածանցներին
2) սովորեցնել բառակազմական վերջածանցների կցման կանոններն ու օրինաչափությունները
3) ցույց տալ վերջածանցների կարևորությունը նոր բառեր ստեղծելու գործում

Վերջնարդյունքներ

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողը պետք է իմանա՝

1) որն է բառակազմական վերջածանցների դերը նոր բառեր կազմելու գործում
2) ադրբեջաներենի ամենագործածական վերջածանցները
3) վերջածանցների կցման կանոնները
4) վերջածանցների օգնությամբ նոր բառեր կազմելու հնարավորությունները և տարբերակները

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողը պետք է կարողանա՝

1) ցույց տալ ադրբեջաներենի ամենագործածական վերջածանցները
2) գրագետ և քերականական կանոններին համապատասխան կիրառել վերջածանցները՝ ստանալով նոր բառեր
3) տարբերակել վերջածանցներն ըստ իրենց բառակազմական նշանակության և գործառնական կիրառության
4) տարբերել ածանցավոր և ոչ ածանցավոր բառերը, բառի մեջ առանձնացնել արմատը և վերջածանցը

Բովանդակություն

1) վերջածանցների էությունը և դերը բառակազմության մեջ
2) վերջածանցների կցման ժամանակ ձայնավորների ներդաշնակության կանոնի գործածումը
3) -çi, -ici, -li, -ca, -siz, -liq, -daş, -ça, -ma բառակազմական վերջածանցները և դրանց գործածման առանձնահատկությունները

4) -la, -laş, -lan, -al բայակերտ վերջածանցները

5) -ca, -la, -ina, -casina, -dan մակբայակերտ վերջածանցները

Ուսումնական նյութեր

1) տեսական նյութ
2) վերջածանցների ցանկով աղյուսակներ, պաստառներ
3) վարժություններ
4) թեստեր
5) ուսուցողական հոլովակներ

Ուսումնական գործունեության տեսակներ

1) բառախաղեր
2) անհատական հանձնարարություններ
3) խմբային աշխատանք
4) դասարանային գործնական աշխատանք
5) զուգադրություններ հայերենի վերջածանցների հետ

Թեմա 3 (8 ժամ)

Հետադրություններ

Նպատակ

1) աշակերտներին ծանոթացնել հետադրություններին որպես առանձին խոսքի մաս
2) ցույց տալ, թե որոնք են հետադրությունների գործառույթներն ադրբեջաներենում
3) ներկայացնել հետադրություններն ըստ համապատասխան խմբերի

Վերջնարդյունքներ

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողը պետք է իմանա՝

1) հետադրության դերն ադրբեջաներենում որպես ոչ ինքնուրույն խոսքի մաս
2) ադրբեջաներենի հետադրությունների համարժեք բառերը հայերենում

3) հետադրությունների գործածության առանձնահատկություններն ու հնարավորությունները
4) հետադրությունների խմբավորման սկզբունքները և խմբերից յուրաքանչյուրի գործածության առանձնահատկությունները

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողը պետք է կարողանա՝

1) ընկալել հետադրությունների գործառութային նշանակությունը, դրանց դերը կապակցված խոսք կազմելու գործում
2) գրավոր և բանավոր խոսքում ըստ անհրաժեշտության գործածել համապատասխան հետադրությունները
3) խմբավորել հետադրություններն ըստ իրենց իմաստային և գործառնական նշանակության
4) ներկայացնել ադրբեջաներենի ամենագործածական հետադրությունները և դրանց կիրառման կանոնները

Բովանդակություն

1) հետադրություններն ադրբեջաներենում, դրանց ընդհանուր բնութագիրը
2) հետադրությունների կիրառության ձևերը և նշանակությունը
3) հետադրությունների խմբավորումն ըստ տեսակների և պահանջվող հոլովների
4) üçün, kimi, sonra, əvvəl, qabaq, haqqında հետադրությունները և դրանց գործածման առանձնահատկությունները
5) qədər, dək, görə, əsasən, qarşı, dair, aid, doğru, tərəf հետադրությունները և դրանց գործածության առանձնահատկությունները
6) başqa, bəri, etibarən, asili olaraq (olmayaraq) հետադրությունները և դրանց գործածության առանձնահատկությունները

Ուսումնական նյութեր

1) տեսական նյութ
2) հետադրությունների ուսուցողական աղյուսակներ
3) վարժություններ

4) թեստեր

5) ուսուցողական հոլովակներ

Ուսումնական գործունեության տեսակներ

1) բառախաղեր
2) անհատական հանձնարարություններ
3) խմբային աշխատանք
4) դասարանական գործնական աշխատանք
5) երկխոսություններ
6) թարգմանություն

Թեմա 4 (6 ժամ)

Ապառնի ժամանակ

Նպատակ

1) ծանոթացնել ադրբեջաներենում ապառնի ժամանակի արտահայտման համար կիրառվող ժամանակաձևերին
2) ցույց տալ վերոնշյալ ժամանակաձևերի գործածության առանձնահատկությունները

Վերջնարդյունքներ

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողը պետք է իմանա՝

1) ապառնի ժամանակի արտահայտման ձևերն ադրբեջաներենում
2) ապառնի ժամանակի երկու ժամանակաձևերի կազմության համար գործածվող վերջածանցները և դրանց կցման կարգը

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողը պետք է կարողանա՝

1) հստակ պատկերացնել ապառնի ժամանակի կատեգորիկ և ոչ կատեգորիկ ժամանակաձևերի միջև առկա տարբերությունները

2) գրավոր և բանավոր խոսքում գործածել սույն ժամանակաձևերով խոնարհված բայեր՝ հետևելով քերականական կանոններին
3) խոնարհել ցանկացած բայ ապառնի ժամանակի կատեգորիկ և ոչ կատեգորիկ ժամանակաձևերով և կիրառել նախադասությունների մեջ

Բովանդակություն

1) ապառնի ժամանակի արտահայտման ձևերն ադրբեջաներենում
2) կատեգորիկ ապառնի ժամանակաձև. ինչ է ցույց տալիս, ինչպես է արտահայտվում (-acaq, -əcək վերջածանցներ)
3) ոչ կատեգորիկ ապառնի ժամանակաձևի բնութագիրը, գործառնական նշանակությունը, խոնարհման ժամանակ գործածվող վերջածանցները (-ar, -ər, -yar, -yər վերջածանցներ)
4) երկու ժամանակաձևերի գործածության հնարավորությունները, տարբերություններն ու առանձնահատկությունները լեզվական տարբեր ոճերում

Ուսումնական նյութեր

1) տեսական նյութ
2) վարժություններ
3) թեստային աշխատանքներ
4) ուսուցողական հոլովակներ
5) բայերի խոնարհման աղյուսակներ

Ուսումնական գործունեության տեսակներ

1) գործնական աշխատանք դասարանում
2) տնային հանձնարարություն
3) բառախաղեր
4) երկխոսություններ
5) թարգմանություն

Թեմա 5 (6 ժամ)

Մակբայ

Նպատակ

1) սովորողներին ծանոթացնել ադրբեջաներենի մակբայներին և դրանց հիմնական բնորոշ առանձնահատկություններին
2) ցույց տալ մակբայների գործածության ձևերը և գործառնական նշանակությունը
3) սովորեցնել մակբայների կազմության ձևերը

Վերջնարդյունքներ

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողը պետք է իմանա՝

1) մակբայների բնութագիրն ու գործածությունը ադրբեջաներենում
2) մակբայների տեսակներն ըստ կազմության
3) մակբայների տեսակներն ըստ իմաստի

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողը պետք է կարողանա՝

1) հստակ տարբերակել ադրբեջաներենի մակբայները մյուս խոսքի մասերից
2) խմբավորել մակբայներն ըստ տեսակի, ցույց տալ մակբայների իմաստատարբերակիչ նշանակությունը
3) խմբավորել մակբայներն ըստ կազմության՝ պարզ, ածանցավոր, բարդ
4) նախադասության մեջ գործածել մակբայներ՝ պահպանելով վերջիններիս կիրառման քերականական կանոնները
5) կատարելով նախադասության ձևաբանական վերլուծություն՝ հստակ ցույց տալ մակբայները և մակբայաբար գործածվող բառերը

Բովանդակություն

1) մակբայի ընդհանուր բնութագիրը
2) տեղի մակբայներն ադրբեջաներենում
3) ժամանակի մակբայներն ադրբեջաներենում
4) ձևի մակբայներն ադրբեջաներենում
5) չափ ու քանակի մակբայներն ադրբեջաներենում
6) մակբայների կազմությունը, մակբայակերտ վերջածանցներ

7) մակբայների շարահյուսական գործածությունը

Ուսումնական նյութեր

1) տեսական նյութ
2) ուսուցողական պաստառներ, աղյուսակներ
3) զրուցարան
4) վարժություններ
5) թեստեր
6) ուսուցողական հոլովակներ

Ուսումնական գործունեության տեսակներ

1) գործնական աշխատանք դասարանում
2) տնային հանձնարարություն
3) բառային աշխատանք
4) տեքստային աշխատանք
5) թարգմանություն

Թեմա 6 (12 ժամ)

Ըղձական, հրամայական, հարկադրական, անհրաժեշտ և պայմանական եղանակներ

Նպատակ

1) աշակերտներին ծանոթացնել ադրբեջաներենի եղանակաձևերին
2) ցույց տալ յուրաքանչյուր եղանակի իրականացրած գործառույթը
3) ցույց տալ եղանակաձևերի կազմության համար անհրաժեշտ վերջածանցների կցման կանոնները
4) ներկայացնել բայի եղանակաձևերի գործածության առանձնահատկությունները

Վերջնարդյունքներ

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողը պետք է իմանա՝

1) ադրբեջաներենում բայի եղանակները և դրանց կազմության ձևերը
2) յուրաքանչյուր եղանակաձևի գործածության շրջանակներն ու առանձնահատկությունները
3) յուրաքանչյուր եղանակաձևի կազմության ժամանակ կիրառվող վերջածանցները

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողը պետք է կարողանա՝

1) հստակ տարբերակել ադրբեջաներենի բայի եղանակներն ըստ իրենց իմաստային և գործառնական նշանակության
2) ցանկացած բայ խոնարհել ուսուցչի կողմից հրահանգված եղանակաձևով
3) գրավոր և բանավոր խոսքում ըստ անհրաժեշտության գործածել բայերի՝ համապատասխան եղանակաձևերով խոնարհված տարբերակները
4) գրագետ կերպով բայահիմքին կցել համապատասխան եղանակային վերջածանցները՝ ցույց տալով վերջածանցների կցման կարգն ու հաջորդականությունը

Բովանդակություն

1) ադրբեջաներենի եղանակները. ներածություն
2) ըղձական եղանակ. ինչ է ցույց տալիս և ինչպես է կազմվում
3) հրամայական եղանակի առաջին և երրորդ դեմքերը, գործածության առանձնահատկություններն ու օրինաչափությունները
4) հարկադրական եղանակի ընդհանուր բնութագիրը, կազմությունը, կիրառությունը
5) անհրաժեշտ եղանակ, ինչպես է այն բնութագրվում և ինչպիսի վերջածանցներով է կազմվում
6) պայմանական եղանակ, եղանակային ցուցիչները և գործածության առանձնահատկությունները

Ուսումնական նյութեր

1) տեսական նյութ

2) վարժություններ

3) տեքստեր

4) թեստեր

5) եղանակաձևերի վերջածանցների աղյուսակներով ուսուցողական պաստառներ

6) ուսուցողական հոլովակներ

Ուսումնական գործունեության տեսակներ

1) գործնական աշխատանք դասարանում և տնային հանձնարարություն
2) բառային աշխատանք
3) խոնարհում
4) տեքստային աշխատանք
5) թարգմանություն
6) շարադրություն

Թեմա 7 (7 ժամ)

Անորոշ անցյալ և անցյալ անկատար (անցյալ շարունակական) ժամանակաձևերը

Նպատակ

1) աշակերտներին բացատրել անորոշ անցյալ և անցյալ անկատար (անցյալ շարունակական) ժամանակաձևերի կիրառման առանձնահատկությունները
2) ցույց տալ, թե ինչ վերջածանցների օգնությամբ են կազմվում վերոնշյալ ժամանակաձևերը

Վերջնարդյունքներ

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողը պետք է իմանա՝

1) անորոշ անցյալ և անցյալ անկատար ժամանակաձևերի կազմությունը
2) անորոշ անցյալ և անցյալ անկատար ժամանակաձևերի գործածության շրջանակները

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողը պետք է կարողանա՝

1) ընկալել անորոշ անցյալ և անցյալ անկատար ժամանակաձևերի նշանակությունը և գործառույթները
2) խոնարհել ցանկացած բայ վերոնշյալ ժամանակաձևերով
3) քաջ ծանոթ լինել սույն ժամանակաձևերի կազմության համար անհրաժեշտ վերջածանցներին և դրանց կցման կանոններին
4) առանձին նախադասություններում, տեքստերում, ինչպես նաև բանավոր խոսքում գործածել համապատասխան ժամանակաձևերը, ինչպես նաև կատարել վերոնշյալ ժամանակաձևերով թարգմանություններ

Բովանդակություն

1) անորոշ անցյալ (վաղակատար ներկա և վաղակատար անցյալ) ժամանակաձևերի կազմությունը (կազմվում է -miş, -miş, -muş, -müş,-ib, ib, -ub, -üb ժամանակային վերջածանցների օգնությամբ , իսկ անցյալը՝ ժամանակային վերջածանցների և անցյալ ժամանակի idi օժանդակ բայի օգնությամբ)
2) անորոշ անցյալ (վաղակատար ներկա և վաղակատար անցյալ) ժամանակաձևերի կիրառությունը
3) անցյալ անկատար (անցյալ շարունակական) ժամանակաձևի կազմությունը (կազմվում է -ir, -ir, -ur, -ür ժամանակային վերջածանցների և անցյալ ժամանակի idi օժանդակ բայի օգնությամբ)
4) անցյալ անկատար (անցյալ շարունակական) ժամանակաձևի գործառնական նշանակությունը

Ուսումնական նյութեր

1) տեսական նյութ
2) խոնարհման աղյուսակներ
3) քերականական վարժություններ
4) թեստային աշխատանքներ
5) ուսուցողական հոլովակներ

Ուսումնական գործունեության տեսակներ

1) գործնական աշխատանք դասարանում
2) տնային հանձնարարություն
3) երկխոսություններ
4) խոնարհում
5) խմբային աշխատանք
6) տեքստային աշխատանք
7) թարգմանություն

Թեմա 8 (8 ժամ)

Կապական բառեր

Նպատակ

1) սովորողներին ներկայացնել կապերի և կապական բառերի էությունն ու ընդհանուր բնութագիրը
2) ցույց տալ, թե ինչպես և երբ են գործածվում կապական բառերը նախադասության մեջ
3) հայերենի հետ անցկացնելով զուգահեռներ՝ ցույց տալ նմանությունները և տարբերությունները հայերենի կապերի և կապական բառերի հետ
4) բացատրել հետադրությունների և կապական բառերի միջև առկա տարբերությունները

Վերջնարդյունքներ

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողը պետք է իմանա՝

1) կապերի և կապական բառերի ընդհանուր բնութագիրը և նրանց հիմնական հատկանիշները
2) կապական բառերի գործածության ձևերը և շրջանակները
3) ադրբեջաներենի ամենագործածական կապերը և կապական բառերը

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողը պետք է կարողանա՝

1) ընկալել կապերի և կապական բառերի դերն ու նշանակությունը որպես ոչ ինքնուրույն խոսքի մաս
2) տարբերել կապական բառերը և հետադրությունները, ցույց տալ դրանց գործածության առանձնահատկությունները
3) գրավոր և բանավոր խոսքում քերականական կանոններին համապատասխան կերպով գործածել կապական բառեր
4) խմբավորել կապերն ըստ իրենց գործառնական առանձնահատկությունների

Բովանդակություն

1) կապերի և կապական բառերի ընդհանուր բնութագիրը
2) հետադրությունների և կապական բառերի տարբերությունն ադրբեջաներենում
3) yerinə, aşaği, yuxari կապական բառերը
4) ara, alt, üst, yan, ön, qabağ, qarşi բառերի կապական կիրառությունը
5) yan, orta, arxa, dal անունների կապական կիրառությունը

Ուսումնական նյութեր

1) տեսական նյութ
2) կապական բառերի խմբավորման աղյուսակներ
3) քերականական վարժություններ
4) թեստային աշխատանքներ
5) ուսուցողական հոլովակներ

Ուսումնական գործունեության տեսակներ

1) գործնական աշխատանք դասարանում
2) տնային հանձնարարություն
3) բառախաղեր
4) խմբային աշխատանք
5) բառային աշխատանք
6) թարգմանություն

Տասներկուերորդ դասարան

/ առաջարկվում է մոտ 40-45 ժամ /

Դասընթացի նպատակն է նաև ներկայացնել ադրբեջաներենի քերականության ավելի բարդ թեմաները, դերբայական դարձվածներով պարզ նախադասություններ և բարդ նախադասություններ կազմելու կանոնները, ինչպես նաև ադրբեջաներենի ոչ ինքնուրույն խոսքի մասերի գործածության ձևերը:Դասընթացի նպատակն է ավելի հարստացնել սովորողների բառապաշարը, ինչպես նաև զարգացնել հաղորդակցման կարողությունները, ծանոթացնել լեզվի տարբեր ոճերի առանձնահատկություններին և բառապաշարի հարստացման հիմնական միջոցներին: Սովորեցնելով տարբեր մեթոդներ՝ սովորողների մոտ զարգացնել թարգմանական և արագ ընթերցանության հմտությունները, միաժամանակ ցույց տալ ադրբեջանական կայքերից գրագետ կերպով օգտվելու ձևերը:

Թեմա 1 (14 ժամ)

Բառապաշար և հաղորդակցություն

Նպատակ

1) սովորողների բառապաշարի մեջ ներմուծել նոր բառեր և արտահայտություններ (բնության, շրջակա միջավայրի պաշտպանությանը, մարդու իրավունքների և հիմնարար ազատություններին առնչվող բառապաշար և այլն)
2) ցույց տալ ադրբեջաներենի բառապաշարի հարստացման հիմնական միջոցները
3) ծանոթացնել ադրբեջաներենի տերմինային համակարգին և ամենագործածական տերմիններին (եզրույթներին)
4) ծանոթացնել խոսքի տարբեր ոճերին և զարգացնել դրանք կիրառելու հմտությունները

5) զարգացնել հաղորդակցական հինգ կարողունակությունները (ունկնդրում, ընթերցանություն, մենախոսություն, գրավոր խոսք, փոխներգործություն)
6) ներկայացնել ժամանակակից աշխարհում մեդիայի դերը և մեդիագրագիտության կարևորության գաղափարը, ինչպես նաև ներմուծել թեմային համապատասխան բառապաշար
7) զարգացնել լրատվության վստահելի աղբյուրներից օգտվելու՝ տեղեկություններ քաղելու կարողություններ, ձևավորել մեդիագրագիտություն
8) սովորեցնել կատարել ադրբեջանական լրահոսի օրվա դիտարկում (մոնիթորինգ)՝ ըստ լրատվության բովանդակային բաժինների

Վերջնարդյունքներ

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողը պետք է իմանա՝

1) ինչ է լեզվական ոճը, ադրբեջաներենի լեզվական տարբեր ոճերի հիմնական բնորոշ առանձնահատկությունները
2) այն բառերն ու արտահայտությունները, որոնց շնորհիվ կկարողանա հաղորդակցվել ավելի բազմազան թեմաների շուրջ (շրջակա միջավայր, մարդու իրավունքներ, տարբեր գիտաճյուղեր և այլն)
3) որն է ադրբեջաներեն տերմինների կարևորությունը բառապաշարի զարգացման գործում
4) ադրբեջաներենի ամենագործածական տերմինները և նոր տերմինների ստեղծման ուղիները
5) հաղորդակցման համար անհրաժեշտ հմտությունների զարգացման հիմնական հնարքները և մեթոդները
6) վստահելի տեղեկատվական աղբյուրները ճանաչելու եղանակները, հղումների տարրական կանոնները
7) խոսքի գործունեության բոլոր տեսակները
8) լեզվամտածողության էությունը և արտահայտման ձևերը

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողը պետք է կարողանա՝

1) լսել և հասկանալ, ընթերցել և հասկանալ բնության, շրջակա միջավայրի, մարդու իրավունքների մասին պատմող նյութի հիմնական իմաստը, ինչպես նաև բանավոր ներկայացնել կամ գրել տեղեկատվական բնույթի խոսք
2) լսել և հասկանալ տեղեկատվական բնույթի տեսանյութի (հարցազրույց, ֆիլմ և այլն) ընդհանուր բովանդակությունը, ինչպես նաև որոշ մանրամասներ
3) կարդալ և հասկանալ գրավոր տեղեկատվական աղբյուրներում պարզ տեքստերի (թերթ, ամսագիր, համացանցային որևէ նյութ, նամակ, հայտարարություն, համառոտ հոդված և այլն) հիմնական բովանդակությունը, ինչպես նաև որոշ մանրամասներ
4) ներկայացնել նախապես պատրաստած որևէ զեկույց և դրա շուրջ մտնել քննարկման մեջ, ինչպես նաև համպատրաստից զրուցել որևէ կարևոր հարցի մասին
5) կարդալ և հասկանալ լրատվության գրավոր աղբյուրներում ծանոթ թեմաներով պարզ հոդվածները՝ տեղեկատվության մեջ զատելով գլխավորը երկրորդականից, համեմատելով այն այլ աղբյուրների հետ և գնահատելով դրա հավաստիությունը
6) լսել միջին բարդության որևէ ոչ ծավալուն ձայնագրություն և դրա հակիրճ բովանդակությունը բանավոր ներկայացնել կամ գրել
7) կառուցել խոսքի արդյունավետ փոխազդեցություն հասակակիցների և մեծահասակների հետ, համարժեք ընկալել բանավոր և գրավոր խոսքը, ճշգրիտ, տրամաբանորեն և արտահայտիչ կերպով արտահայտել սեփական տեսակետը առաջադրված հարցի վերաբերյալ

Բովանդակություն

1) հաղորդակցության միջոցները և ձևերը (խոսքային և ոչ խոսքային)
2) ինչ է խոսքի ոճը, ինչ տեսակներ կան
3) հաղորդակցման հմտությունները զարգացնելու մեթոդներ
4) մամուլի, տեղեկատվության լեզու. բառապաշարային առանձնահատկությունները
5) պաշտոնական գրագրության լեզու (ընդհանուր բնութագիր)

6) գրքային բառապաշար՝ հնաբանություններ և նորաբանություններ (ընդհանուր բնութագիր)
7) ժարգոնային և բարբառային բառերի գործածությունը
8) գործածական տերմիններ (ռազմաքաղաքական, իրավական, տնտեսագիտական, մարզական, շրջակա միջավայրի վերաբերյալ և այլն)
9) լեզվամտածողություն, ադրբեջանական լեզվամտածողության առանձնահատկությունները

Ուսումնական նյութեր

1) տեսական նյութ
2) պաստառներ
3) աուդիո ձայնագրություններ
4) տեսանյութեր
5) ֆիլմեր
6) տեքստեր
7) զրուցարան
8) նամակներ
9) հոդվածներ

Ուսումնական գործունեության տեսակներ

1) գործնական աշխատանք դասարանում
2) տնային հանձնարարություն
3) երկխոսություններ
4) թարգմանություն
5) զրույց-քննարկում, հարց ու պատասխան
6) բանավեճ, խմբային աշխատանք
7) դերախաղ
8) մտագրոհ
9) զեկույցներ

Թեմա 2 (9 ժամ)

Դերբայ

Նպատակը

1) սովորողներին ներկայացնել դերբայի ընդհանուր բնութագիրն ու հիմնական գործառույթներն ադրբեջաներենում
2) ծանոթացել դերբայների տեսակներին և նրանցից յուրաքանչյուրի կազմության համար գործածվող վերջածանցներին
3) ցույց տալ դերբայների շարահյուսական գործածության ձևերը
4) սովորողներին բացատրել մակբայական դերբայների էությունը, կազմությունն ու գործածության առանձնահատկությունները

Վերջնարդյունքներ

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողը պետք է իմանա՝

1) ինչ է դերբայը, ինչպես է այն արտահայտվում որպես առանձին խոսքի մաս
2) դերբայների տեսակներն ու առանձնահատկություններն ադրբեջաներենում
3) դերբայների գործառնական նշանակությունը
4) ադրբեջաներենի ամենագործածական մակբայական դերբայները, դրանց կազմության համար կիրառվող վերջածանցները և գործածման հնարավորությունները

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողը պետք է կարողանա՝

1) ներկայացնել դերբայների ընդհանուր բնութագիրը
2) ցույց տալ դերբայների կազմությունը և տեսակները
3) գործածել դերբայները նախադասություններ կազմելիս, ինչպես նաև թարգմանություններ կատարելիս
4) ներկայացնել մակբայական դերբայների էությունը, կազմության ձևերը և կիրառական նշանակությունը
5) մակբայական դերբայների օգնությամբ կազմել նախադասություններ, ինչպես նաև բարդ ստորադասական նախադասությունները դարձնել պարզ նախադասություններ

Բովանդակություն

1) դերբայի ընդհանուր բնութագիրը և առանձնահատկությունները, ինչ հարցերի է պատասխանում
2) դերբայներն ըստ տեսակի և կազմության
3) անորոշ դերբայ. անորոշ դերբայների գործածումը գոյականաբար (հոլովվումը, պատկանելության վերջածանցների կցումը)
4) ներկա ժամանակի դերբայ, -an, -ən, -yan,-yən վերջածանցների կցման կարգը և գործածումը
5) անցյալ ժամանակի դերբայ, -miş, -miş, -muş, -müş վերջածանցների կցման կարգը և կիրառությունը
6) ապառնի ժամանակի դերբայ, -acaq, -əcək, -yacaq, -yəcək վերջածանցների կցման կարգը և գործածումը
7) զուգահեռների անցկացում հայերենի դերբայների հետ, հիմնական տարբերությունները գործածության մեջ
8) մակբայական դերբայների բնութագիրը, կազմությունն ու գործածությունը
9) -anda, -ib, araq մակբայական դերբայների կազմությունն ու կիրառությունը
10) -diqca, -madan, -inca, -a, -kən մակբայական դերբայները, կազմությունն ու գործածումը նախադասությունների մեջ
11) ադրբեջաներենի մակբայական դերբայներով և հայերենի դերբայական դարձվածով նախադասությունների միջև առկա տարբերություններն ու ընդհանրությունները

Ուսումնական նյութեր

1) տեսական նյութ
2) աղյուսակներ
3) պաստառներ
4) ուսուցողական հոլովակներ
5) վարժություններ
6) թեստեր
7) տեքստեր

Ուսումնական գործունեության տեսակներ

1) դասարանային գործնական աշխատանք
2) տնային հանձնարարություն
3) թեմատիկ աշխատանք
4) թարգմանություն
5) երկխոսություն
6) բառախաղեր
7) զուգադրություններ հայերենի հետ

Թեմա 3 (8 ժամ)

Բայի սեռը

Նպատակ

1) ծանոթացնել ադրբեջաներենի բայի սեռի տեսակներին
2) ցույց տալ տեսակներից յուրաքանչյուրի կազմությունը և բնորոշ առանձնահատկությունները
3) ներկայացնել բայի սեռի տեսակներից յուրաքանչյուրի գործառնական նշանակությունը

Վերջնարդյունքներ

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողը պետք է իմանա՝

1) ինչ է բայի սեռը, ինչ է այն ցույց տալիս
2) ադրբեջաներենում բայի սեռի տեսակները
3) բայի սեռի գործածության առանձնահատկությունները

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողը պետք է կարողանա՝

1) տարբերել ադրբեջաներենում բայի սեռն ըստ տեսակների
2) ընկալել սեռի տեսակներից յուրաքանչյուրի գործածության բնորոշ կողմերը
3) ցանկացած բայ փոխակերպել համապատասխան սեռով ուսուցչի տված հրահանգի համաձայն

4) բանավոր և գրավոր խոսքում ըստ անհրաժեշտության գործածել համապատասխան սեռով դրված բայեր

Բովանդակություն

1) բայի սեռի ընդհանուր բնութագիրը, տեսակները
2) կրավորական սեռ. ինչպես է այն արտահայտվում ադրբեջաներենում, գործածության յուրահատկությունները
3) անդրադարձ սեռ. կազմությունը, գործածության նրբությունները
4) փոխադարձ սեռի կազմությունը, վերջածանցների կցման կարգն ու գործածումը
5) պատճառական սեռի բայերի կազմությունը, գործառնական նշանակությունն ու առանձնահատկությունները
6) բայի սեռի տեսակների համարժեք ձևերը հայերենի քերականության մեջ

Ուսումնական նյութեր

1) տեսական նյութ
2) աղյուսակներ ըստ բայի սեռի տեսակների
3) ուսուցողական ձայնային և տեսանյութեր
4) վարժություններ
5) թեստեր
6) տեքստեր

Ուսումնական գործունեության տեսակներ

1) գործնական աշխատանք դասարանում
2) տնային հանձնարարություն
3) թեմատիկ աշխատանք
4) թարգմանություն
5) խոնարհումներ համապատասխան սեռի բայերով
6) բառախաղեր
7) զուգադրություններ հայերենի հետ

Թեմա 4 (6 ժամ)

Վերաբերական և ձայնարկություն

Նպատակ

1) սովորողներին ծանոթացնել ադրբեջաներենի ոչ ինքնուրույն խոսքի մասերին, մասնավորապես՝ վերաբերականներին և ձայնարկություններին
2) ցույց տալ ամենագործածական վերաբերականներն ու ձայնարկությունները և նրանց գործածության ձևերը նախադասության մեջ

Վերջնարդյունքներ

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողը պետք է իմանա՝

1) ինքնուրույն և ոչ ինքնուրույն խոսքի մասերի հիմնական տարբերությունները
2) ադրբեջաներենի ոչ ինքնուրույն խոսքի մասերը և դրանց գործածության առանձնահատկությունները
3) ադրբեջաներենի առավել կիրառելի վերաբերականները և ձայնարկությունները

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողը պետք է կարողանա՝

1) ներկայացնել ադրբեջաներենի ոչ ինքնուրույն խոսքի մասերը և հստակ տարբերակել մյուս խոսքի մասերից
2) նախադասությունների մեջ, ինչպես նաև բանավոր խոսքում գործածել անհրաժեշտ վերաբերականներ և ձայնարկություններ
3) թարգմանություններ կատարելիս հստակ գտնել համապատասխան վերաբերականների և ձայնարկությունների հայերեն համարժեքները

Բովանդակություն

1) ադրբեջաներենի ոչ ինքնուրույն խոսքի մասերի առանցքային գծերը, տարբերությունները մյուս խոսքի մասերից
2) ադրբեջաներենի վերաբերականները. բնութագիրը, տեսակներն ըստ իրենց արտահայտած իմաստի (əlbəttə, mütləq, doğrudan, yəqin, bəlkə, beləliklə, nəhayət, hayif և այլն)

3) ադրբեջաներենի ձայնարկությունները, տեսակներն ըստ իրենց արտահայտած իմաստի (vay, oy, oh, bəh, ay, ay can, paho, aman, haray, hey, bəh, pah և այլն)
4) վերաբերականների և ձայնարկությունների գործածումը գեղարվեստական ստեղծագործությունների մեջ, առօրյա շփման մեջ

Ուսումնական նյութեր

1) տեսական նյութ
2) աղյուսակներ (վերաբերականների և ձայնարկությունների)
3) ուսուցողական ձայնային և տեսանյութեր
4) շուտասելուկներ
5) թեստեր
6) տեքստեր
7) զրուցարան

Ուսումնական գործունեության տեսակներ

1) գործնական աշխատանք դասարանում
2) տնային հանձնարարություն
3) հարց ու պատասխան
4) թարգմանություն
5) բառախաղեր
6) զուգադրություններ հայերենի հետ

Թեմա 5 (7 ժամ)

Բաղադրյալ ժամանակաձևեր

Նպատակ

1) սովորողներին բացատրել բաղադրյալ ժամանակաձևերի կազմությունը և նշանակությունը
2) ցույց տալ ադրբեջաներենի բաղադրյալ ժամանակաձևերը և դրանց կազմությունը
3) ներկայացնել բաղադրյալ ժամանակաձևերի գործածության շրջանակները

Վերջնարդյունքներ

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողը պետք է իմանա՝

1) բաղադրյալ ժամանակաձևերի էությունը և նշանակությունը
2) ադրբեջաներենի ամենագործածական բաղադրյալ ժամանակաձևերը և դրանց կազմությունը
3) բաղադրյալ ժամանակաձևերի կիրառումը բանավոր և գրավոր խոսքում

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողը պետք է կարողանա՝

1) ցույց տալ ադրբեջաներենի ամենագործածական բաղադրյալ ժամանակաձևերը
2) տարբերել բաղադրյալ և ոչ բաղադրյալ ժամանակաձևերն ըստ կազմության
3) նախադասություն կազմելիս կամ թարգմանություն կատարելիս գրագետ կերպով օգտվել բաղադրյալ ժամանակաձևերից
4) ցանկացած բայ խոնարհել ուսուցչի հրահանգած համապատասխան բաղադրյալ ժամանակաձևով

Բովանդակություն

1) ադրբեջաներենի բաղադրյալ ժամանակաձևերի ընդհանուր բնութագիրը, բնորոշ գծերը
2) կարելիության և անկարելիության ձևերն ադրբեջաներենում, հայերենի <<կարողանալ>> բայի արտահայտման ձևերն ադրբեջաներենում որպես պակասավոր բայ
3) անորոշ ապառնիի անցյալ ժամանակաձև. կազմությունը, գործածման հնարավորությունները
4) ապառնի-անցյալ ժամանակաձև. կազմությունը, գործածության առանձնահատկությունները
5) անորոշ անցյալի բաղադրյալ անցյալ ժամանակաձև, ինչպես է կազմվում և գործածվում
6) ներկա շարունակական ժամանակձևի անցյալ ժամանակ, կազմությունը և սահմանափակ գործածությունը

Ուսումնական նյութեր

1) տեսական նյութ
2) բաղադրյալ ժամանակաձևերի խոնարհման աղյուսակներ
3) ուսուցողական տեսանյութեր
4) թեստեր
5) վարժություններ
6) տեքստեր

Ուսումնական գործունեության տեսակներ

1) գործնական աշխատանք դասարանում
2) տնային հանձնարարություն
3) երկխոսություններ
4) թարգմանություն
5) բառախաղեր
6) զուգադրություններ հայերենի հետ

Թեմա 6 (8 ժամ)

Ընթերցանության հմտություններ

Նպատակը

1) սովորողների մոտ զարգացնել ընթերցանության հմտությունները
2) սովորեցնել ընթերցած տեքստը վերարտադրելու կամ գրավոր վերաշարադրելու մեթոդները
3) նպաստել արագ ընթերցանության կարողության զարգացմանը՝ միաժամանակ կարևորելով նյութը ընկալելու և հիշելու գործոնը
4) սովորեցնել արտահայտիչ ընթերցանության մեթոդներն ու հնարքները

Վերջնարդյունքներ

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողը պետք է իմանա՝

1) գեղեցիկ և առոգանությամբ տեսքտը ընթերցելու հնարքները և միջոցները

2) կարդացած նյութը հիշելու, վերապատմելու կամ գրելու համար անհրաժեշտ գիտելիքները

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողը պետք է կարողանա՝

1) առոգանությամբ և սահուն ընթերցել հանձնարարված տեքստը
2) արագ ընթերցել ուսուցչի կողմից հանձնարարված տեսքտային նյութը՝ կենտրոնանալով նաև բուն բովանդակության վրա
3) պարզ ու մատչելի խոսքով վերապատմել ընթերցած ծավալուն նյութը, պատասխանել հարցերի
4) կարդացած տեքստի բովանդակությամբ գրել փոխադրություն՝ պահպանելով դեպքերի և իրադարձությունների հերթականությունը և գործածելով նկարագրական մեթոդը
5) ցույց տալ խոսքի և ընթերցանության արտահայտչականությանը նպաստող միջոցները

Բովանդակություն

1) արտահայտիչ ընթերցանության կարողության ձևավորման մեթոդները և դրանց իրագործման եղանակները
2) տեսքտը որպես ընթերցանության նյութ
3) առոգանություն, ձայն և ձայներանգ
4) շեշտը և դրա տեսակները. տրամաբանական շեշտ
5) տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների դերը ընթերցանության աշխատանքների ընթացքում

Ուսումնական նյութեր

1) տեսական նյութ
2) աուդիո ձայնագրություններ
3) տեսանյութեր, ֆիլմեր
4) տեքստեր
5) զրուցարան

Ուսումնական գործունեության տեսակներ

1) ընթերցանություն դասարանում
2) ընթերցանություն տանը
3) երկխոսություններ
4) թարգմանություն
5) զրույց-քննարկում
6) ասմունք, բանավեճ, խմբային աշխատանք
7) դերախաղ, կարճ բեմադրություն
8) մտագրոհ